



պահել չանդուցեալ թագաւորի համար, իսկ այն դուռերին, որոնց գլխաւորն էր Հանգուցեալ Կայսրը, հինգ շաբաթ սուգ պահելու Կրանով, ասված է հրամանի մէջ, զորքերը կապացուցանեն, որ նրանք բաժանում են իմ խորին տխրութիւնը իմ ամենամօտ բարեկամ և քրոջ որդու մահուան առիթով և մի և նոյն ժամանակ կը յարգեն Հանգուցեալ թագաւորի առանձին բարեկամութիւնը և սէրը դէպի դերմանական զօրքերը: Առ ժամանակ վճռված է, որ դերմանական թագաւորանիւնը մի քանի գններովներէ և բարձրաստիճան անձանց հետ կուղևորվի Ս. Պետերբուրգ Հանգուցեալ Կայսրի յուզարկաւորութեան հանդիսին ներկայ գտնվելու համար: Մարտի 3-ին գերմանական կայսրը ընդունեց լայնատազի նախագահին, որը յայտնեց նրան Գերմանիայի ներկայացուցիչների ցաւակցութիւնը պատահած դժբաղդութեան առիթով: Կայսրը յանձնեց նախագահին շնորհակալութիւն յայտնել լայնատազին նրա համակրութեան համար:

Բերլինից հաղորդում են հետեւեալ տեղեկութիւնները: Այստեղ դարձեալ լուրեր տարածվեցան կոմս Հալսթեդի յանձնարարութեան անաջողութեան մասին: Բայց ո՞վ կարող է իմանալ, թէ կոմս Հալսթեդին ի՞նչպիսի յանձնարարութիւն է տրված: Ամենքը կարծում են, որ այդ յանձնարարութիւնը խաղաղասիրական բնակարանութիւն ունէր, նա պէտք է համոզէր Բ. Գրանը զինուորական անելու Բայց պէտք է ի նկատի առնել, որ գրանը ենթադրական կարծիքներ են և փաստերով չեն ապացուցված: Այստեղի արժանահաւատ շրջանների մէջ միայն յոյսեր էին յայտնում խաղաղութիւնը պահպանելու մասին: Ինչ կը վերաբերի իշխան Բիսմարկի վճռողական կարծիքին, նրան ոչոք չէ լսել, որովհետեւ իշխանը բոլոր ժամանակ լուրեր են և պահում յոյս: Թիւրքական խնդրի մասին: Թիւրքաց և յուսական հաւատարմատարները հեռուից միայն տեսնում են պետական կանցլերին և առիթ չեն ունեցել նրա հետ խօսակցելու: Վերջապէս իշխան Բիսմարկ պատճառ չունի աշխատել խաղաղութիւն պահպանելու մասին: Եթէ Թիւրքիայի և Յունաստանի մէջ առանձնացած պատերազմ կը լինի, Թիւրքիան կը յաղթի և Աւստրո-Ունգարիան կարող է ստանալ Միտրովիցա: Բոլորացիներն էլ կարող են այդ պատերազմից օգուտ քաղել, որովհետեւ Գերմանիան նրանց դէմ ոչինչ չունի: Աւստրո-ունգարական և գերմանական կառավարութիւնները Արևելեան-Բալկանիան Բոլզարիայի հետ միացնելու մտքի հետ վաղուց հաշտվել են և մի և նոյն ժամանակ կարծում են, որ ուժեղացած Բոլզարիան միակ է, որ կարող է ընդգրկմանը Ռուսաստանի ազդեցութեանը Միայն Ֆրանսիան կարող էր ընդգրկմանը այդ գործին, բայց նրա համար էլ վաղուց պատրաստված է վարձատրութիւն Յունիսի մէջ:

ԹԻՒՐԿԻԱ

Սթամպուլ լրագիրն իւր ուրբաթ աւուր թուոյն մէջ հետեւեալ հատուածն հրատարակած է.

«Հայաստանէն հասած միշտ իրարմէ աւելի տխուր լուրերն յիշել կուտան ամենուն որ եթէ բնական է որ կառավարութիւնը մանաւանդ այսօր զբաղի Հիլլենական խնդրով, յորմէ կրնայ պատերազմ ծագիլ, պէտք չէ մոռնայ նաև որ հայկական խնդիր մ'ալ կայ: Հայոց երկայնամտութիւնն ու համբերատարութիւնն, որուն այնչափ

բազմաթիւ հաւաստիները տուած են մինչև ցայսօր, ոչ թէ մոռացում կամ անտարբերութիւն պարտի հրաւիրել, այլ ընդհանրապէս հոգածութեան շարժառիթ պարտի լինել, որովհետև այդ տարաբաղդ ժողովրդեան կացութիւնն երթալով աւելի ողբալի կը լինի:

«Ստար երկիրներէ հասած օգնութեանց հակառակ, տակաւին զգալի եղող սովին տառապանքներէն զատ, շատ տեղեր տեղական աւաղակութեանց վրայ քրդական բազմաթիւ հրոսախմբոց ներկայութիւնն ալ կաւենայ, որք պարսկական զօրքերէն յետո մղուելով կուգան իրենց կրած ձախողութեանց վրէժն Օսմանեան հպատակաց ամենէն խաղաղ ժողովուրդներէն հանել:

«Այսպէս, Հէքիարիի նահանգին արդէն առաջին այցելութիւն մի տուած էին քիւրդերն՝ իրենց արշաւանաց համար ծանրաշուք ժամանակ: Այս առաջին այցելութիւնն յիսուհի չափ զիւղերու աւերմամբ նշանուոր եղաւ:

«Այժմ նոյն քիւրդերը Պարսիկներէն յետո մղուելով դարձեալ նոյն նահանգներէն, նորէն աւարի տուին զայն, և թըշուառ բնակչաց բնակարաններուն մէջ գետեղուեցան, որք արդէն ինքզինքնին ապրեցնելու անկարող, հարկադրեալ են այդ աւաղակաց ալ ապրուստն անսպառաճ հոգալ:

«Եւ այդ քուրդերը, կրտսն այս լուրերը տուող հեռագիրը և նամակը, տեղական իշխանութեանց կողմէ լաւ ընդունելութիւն գտած են: Վերջապէս տեղական իշխանութիւնը, փոխանակ նահանգին քսան հազար զրիւ ցորեն մատակարարելու, որք Կ. Պոլսէն եկած հրամանաց վրայ խոստացուած էին, կը սահմանեն որ նահանգը կանխաւ իրեն փոխ տրուած ցորենը հատուցանէ: Այս իրողութիւնները մանրամասնաբար նկարագրող և Կ. Պոլիս ուղղեալ աղբրագրող մին՝ աւելի թրքաց ստորագրութիւն կը պարունակէ քան թէ հայոց:

«Ահաւասիկ Կ. Պոլիս հասած բազմաթիւ նամակաց միոյն բովանդակութիւնը, զոր նմանօրինակ գրութեանց մէջէն ըստ զիպաց առինք, և չեմք ուզեր միւս գրութեանց բովանդակութիւնն ընել: Այնչափ սրտածմբիլ է նոցա պարունակութիւնը:

«Գալով տեղական իշխանութեանց կողմէ քուրդ աւաղակաց եղած համակրական ընդունելութեան, վայրկեան մ'իսկ Հեմք ուզեր ընդունիլ, որ ասոնք Կ. Պոլսէն դէնացած հրամանաց համեմատ շարժած են: Ընդհանրապէս՝ համոզված եմք որ պատճառը պաշտօնատարաց և քրդաց միջև եղած համաձայնութիւնն է դարձեալ, որ շատ անգամ հաստատուած իրողութիւն մ'է:

«Կը հաւատամք դարձեալ որ Օսմանեան պաշտօնատարք՝ թէ ընդհանրապէս՝ կայսերական կառավարութիւնէն հրահանգներ ստացած են, որք իրենց կը պատուիրեն խաղաղարաց և աւարառուաց դէմ պաշտպանել պարկիշտ և անձուէր ժողովուրդն և օգնութեան ձեռն կարկառել նմա, բայց ահա անգամ մ'ալ պէտք կը լինի հաստատել թէ ինչպէս կը գործադրին այդ հրահանգները:

«Քանիցս անգամ ըսած եմք արդէն թէ Հայաստանի մէջ գտնուող պաշտօնատարք, թիւրևս առ երկուդի, բայց աւելի հաւանականաբար ուրիշ նուազ խոստովանիլ պատճառներով ընդհանրապէս տեսակ մը համաձայնութիւն կը զոյգանեն քրդաց

զինաւորներուն հետ, այն քրդաց, որ բոլոր տեղացի խաղաղ ժողովուրդները կը հարստահարեն թէ թուրք և թէ քրիստոնեայ:

«Ուրեմն պէտք է որ Բ. Գուռը խստութիւն բանեցնէ այդ պաշտօնատարաց դէմ: Մինչև որ վարչական մարմինը խնամով մաքրելու չը ձեռնարկուի, այդ երկիրներու բնակիչք թշուառ պիտի լինին միշտ:

«Զեմք վախճար ըսելու որ այս միջոցը ձեռք առնելու համար ժամանակն ստիպողական է. միջոց մը, որ այնչափ անգամ ինչդուած, շատ անգամ խոստացուած և միշտ անկատար կերպիւ գործադրուած է:

«Սոսկ մարդասիրական խնդիր մը չէ այս, այլ կառավարութեան համար կրկին շահ կայ թէ թուրքերն և թէ քրիստոնեայներն ազատելու այդ սոսկալի կացութիւնէն, յորում մոռցուած կը թուին: Վերջիւնապէս գաւառներն այն ատեն միայն հասցոյթ պիտի բերեն երբ ապահովութիւնն հաստատուի: Բ. Գուռը մեծազոյն շահ մ'ունի կանխելու այն դիտողութիւնները՝ զոր պիտի ընեն իրեն եւրօպական տէրութիւնք Պէրլինի դաշնագրին 61-րդ յօդուածին նկատմամբ, երբոր հելլենական խնդիրն որ և իցէ կերպիւ կարգադրի:»

(Մատիս)

ՍՈՎԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Պ. Գ. Յակոբեան ազգանունով մէկը նամակ է գրել «Times» լրագրի խմբագրին, որի բովանդակութիւնը հետեւեալն է: Տէր, խնդրեմ սովելոց կենտրոնական յանձնաժողովի տեղեկագիրը ուղարկէք հայոց պատրիարք արք. Ներսէսին: Անցեալ 1880 թւի ընթացքում ժողովով և բաժանվել է վերոյիշեալ կենտրոնական յանձնաժողովի միջոցով 28,000 անգլիական լիւրա, (մեր փողով մօտաւորապէս 280,000 լուր կանի): Անտարակոյս այդ գումարով շատ բարեբարութիւններ կատարվել են, բայց միանգամայն և յայտնվել է, որ այդ դարմանը մի տկար միջոց է այն բազմապատկող չարեաց դէմ, որ սովը հազարաւոր զոհեր առնելով՝ պատճառել է Հայաստանին: Մեր հայրենիքի ցորենի արդիւնաբերութիւնը, որ միջին թւով տարեկան լինում է 21,000 սօմար, 1,600 սօմարի է իջել: 1877 թւին արշաւներ գտնում էին 36,000 հատ. այս տարի նրանց թիւը 3,700-ից ևս պակաս է: Ուրեմն, բացայայտ է, որ եթէ այդ զարմանալի վերադր կազմված յանձնաժողովի նիւթական միջոցները չը զօրացվեն Հայաստանի սովալուկ ժողովուրդի բարեկամների կողմից, այն ժամանակ մինչև այժմ եղած օգնութիւններն ևս զուր կանցնեն և սովը անխնայ կստորած կանի: Հայերը վստահաւորով իրանց բարեմանութիւնների վրա և պարծենալով իրանց դիրքով, որ ունեն քրիստոնէութեան պատմութեան մէջ, հաւատում են, որ նրանք մէկ օր նշանաւոր քաղաքակրթիչ ազդեցութիւն կունենան Արեւմտեան Ասիայում, միայն եթէ այսօր նրանց օգնեն այս սարսափելի նեղութիւնից դուրս գալու:

ՍՊԱՆԻԱ

Լրագիրների մէջ կարդում ենք հետեւեալ տեղեկութիւնները: Սպանիայի այժմեան դրութիւնը չափազանց հետաքրքիր է, որովհետեւ կառավարչական միակողմանի ձեւը փոխվում է սահմանադրական ձեւի: Կանոնադրեալ-կաստիլիո միւնիստրի ձնշող և միակողմանի կառավարութիւնը պետական և հասարակական կեանքը մինչ այն աստիճան

առանձնացրեց, որ կարծես Սպանիան մեռել էր: Կղերական և յետադիմական ազդեցութիւնների շնորհիւ ժողովուրդից կատարելապէս բաժանված սպանիական թագաւորը ստիպված էր կառավարել երկիրը ազգային ժողովի աննշան մեծամասնութեան օգնութեամբ, որին ժողովուրդը բողոքովն չէր համակրում և որ միւնիստրութեան կողմ դործիք էր դարձել: Այդպիսի գործունէութիւնը գնահատան հանգամանքների շնորհիւ անկարելի դարձաւ և կառավարութիւնը ստիպված էր փոխել իր ուղղութիւնը:

Կառավարութիւնը յանձնվեցաւ սահմանադրական Սագաստային, որ ծանօթ է եւրօպայի պետական կառավարչական եղանակների հետ և որ չափաւոր կարծիքների տէր մարդ է: Բայց որովհետեւ նա կղերական չէ, յետադիմականները նրա դէմ բացարձակ և գաղտնի կուռ սկսեցին: Այդ կուռ մանրամասնութիւնները հետաքրքիր են դարձնում Սպանիայի այժմեան դրութիւնը: Իրանց թագաւորի կողմնակիցներ ցոյց տուող և միեւնոյն ժամանակ նրան զազանի կերպով փոս փորող մարդիկ դեռ յոյս ունեն, որ յաղթող կը հանդիսանան:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՑ

Կ. Պոլիս, 1 մարտ 1881

Գիտաւոր աստղի պէս կերկի ու կանխելութեան մեր գրաբառի և աշխարհաբառի հարցը: Այս անգամ դիւցազանց լեզուի զորաւոր պաշտպաններով կը ներկայանայ. զեղեցիկ սկսել իր հովանաւորութիւնը շնորհած է նմա, և եթէ քիչ մը աւելի բարակ քաղաքակրթութեամբ լլայլայնք, պիտի պարտաւորէինք յաղթանակը գրաբառին թողուլ: Պատերազմը սկսել է, մարտի դաշտը Մասիսի Թէքէմա: Եւր և երկտաւար, մանչ ու աղջիկ, գիտուն, տղեւ ասպարէզ նետուած են, բարեխօս ունենալով Արարատեան և Ուլմբական աստուածներն ու աստուածուհիները. քաջը ընդ քաջաց կուռնի: Ինչ կը սկսեն, քիչ կը գրեն, այս մասին տեղեկութիւն մի սպասէք, զի ոչ մէկ յօդուածը ամբողջ կարողութեամբ չի կարող ունեցանք: Անմեղ խնդիրներ են: Այս խնդրոյ չափ գուցէ անմեղ չլլան կաթողիկոսական հարցերն, որ քիչ անգամ հրապարակէն կանխելութեանն են: Նորէն խոշոր լուր. «Ռուսաստանի հայերը Վեն. Կաթողիկոսը տապալելու սկսած են:»—զայս կը հաղորդէ Հայրենիքը և միւս թերթերը կը կրկնեն: Հայրենիքը ու նմանք կը բարկանան ոչ թէ Կաթողիկոսի դէմ աշպարհի գործեր ընկնուող համար, այլ թէ Կ. Պոլսոյ հայերն որ երկար առնեն չը յիշուին կարօտ մնացած են քիչու չը պիտի մասնակցեն այս ողբերգութեան: Լուրը ինքնին անհաւատարի թուեցաւ և կարեւորութիւն չը ստացաւ: Բայց յայտնի է թէ ամենքն ալ կը փափաղին որ Վեն. Հայրապետը աւելի սիրուէր, աւելի յարգուէր ժողովուրդին: Պ. Նիկողոսեանց Մասիսի մէջ ուսեացուող մասին գրած յօդուածներով ցոյց կուտայ թէ իշխանական անտարբերութեամբ ու յամառութեամբ կը դիմեն: Այս տեղեկութիւնը խիստ վատ աւարտութեամբ կը ընթանայ: Ո՞վ է, քիչ է այդ տէր Գալուստը: Կը պարծենանք թէ մեր եկեղեցին ժողովուրդին է, սակայն ազգին ամենէն կենսական շահերը մատուած են մի քանի արեւմտեան ազգը դժգոհ է. ո՞վ մտիկ կընէ: Ո՞ր պիտի երթայ այս բռնապետութեան վերջը. ուսկից ելան, որոնք են այդ Մանկուկները, այդ Գալուստները, որոց խաղալիք եղած ենք: Կը կարծուի թէ Ազգ. Ժողովը վերջապէս պիտի պարտաւորի հանդիսաւոր կերպով Թիւրքիոյ հայոց խորին ցաւակցութիւնը յայտնել իշխանական շահերը որ այսքան թեթիւ կերպով կը շարժի ազգային ամենաեական հարցերու մէջ: Բայց առ այժմ այդ ժողովը գոհունակութիւն կը յայտնէ Արաշիբոյի 17,000 բուրժներու մասին իշխանական ընդունած պատասխանին համար: «Այդ նուէրներէն, կըսէ կոնգրակը, 21,000 դուլ է աւելցրել է, որով գնած են 21 հատ ուսու հոգալ» 5. Ասոնց տոկոսին մէկ մասը



Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.